Կարծիք

Աննա Աշոտի Հակոբյանի

«Դատական նախադեպը նորմատիվ կարգավորիչների համակարգում. պատմատեաական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով թեկնածուական ատենախոսության վերաբերյալ

Գրախոսվող թեկնածուական ատենախոսությունը նվիրված է իրավունքի տեսության խնդրահարույց հարցերից մեկի՝ դատական նախադեպերի էության, առանձնահատկությունների հետ կապված հիմնախնդիրների համալիր ուսումնասիրությունը:

Քննարկվող ատենախոսական թեմայի հետազոտության արդիականությունը պայմանավորված է իրավակարգավորումների ոլորտում դատական որոշումների, իրավական դիրքորոշումների, դատական նախադեպերի դերի և նշանակության բարձրացմամբ:

Արդի ժամանակրջանի աքզգային իրավական համակարգում դատական նախադեպը ձեռք է բերել գրեթե իրավունքի աղբյուրի նշանակություն: Ուստի օբյեկտիվ անհրաժեշտություն է նաև այդ ինստիտուտի համալիր գիտական հետազոտության անցկացումը:

Հենց սկզբից նշենք, որ հեղինակին հաջողվել է լիովին բացահայտել թեմայի էությունը և նրա բազմազան դրսևորումները:

Նախքան ատենախոսական աշխատանքի վերլուծության անցնելը, անհրաժեշտ է ընդգծել ատենախոսի խորը և համակողմանի պատկերացումը դատական նախադեպի ծագման, պատմական զարգացման և արդի դրսևորումների վերաբերյալ:

Գրախոսվող ատենախոսական խատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, ամփոփումից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի ու մասնագիտական գրականության ցանկից:

Աշխատանքի առաջին գլխում՝ «Դատական նախադեպի առաջացման և զարգացման պատմական ընթացքը» վերտառությամբ, հեղինակը հանգամանորեն

վերլուծում է դատական նախադեպի ձևավորման և պատմական զարգացման հետ կապված հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Նախադեպային իրավունքի նկարագիրը, էությունը և բնութագրական հատկանիշները» վերնագրով, հեղինակը բացահայտում է դատական նախադեպի էությունը, բնութագրական հատկանիշները և տեսակները, ինչպես նաև դատական նախադեպերի տեղը իրավունքի աղբյուրների համակարգում:

Վերջապես, աշխատանքի երրորդ գլխում՝ «Նախադեպի ինստիտուտը Հայաստանի Հանրապետության արդարադատության համակարգում» վերտառությամբ, հեղինակը վերլուծում է դատական նախադեպի արժեբանական բնութագիրը՝ որպես ժամանակակից իրավական համակարգի լիարժեք իրավունքի աղբյուր:

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, ունենք որոշակի նկատառումներ, որոնք հանգում են հետևյալին.

Առաջին, հեղինակը արձանագրում է, որ նախադեպերը առաջանում են մեկ կամն մի քանի դատական որոշումների արդյունքում, սակայն, մեր կարծիքով, բավարար չափով չի հիմնավորում իր առաջ քաշած թեզը:

Երկրորդ, խոսելով դատական նախադեպի կիրառման հնարավորությունը ազգային իրավական համակարգում, չի հստակեցնում, թե դատական նախադեպի որ տեսակի մասին է խոսքը, քանի որ դասական դատական նախադեպի կիրառման հնարավորությունը մեր իրավական և դատական պրակտիկայում, գտնում ենք դեռ վաղ է:

Սակայն վերոնշված նկատառումները առաջարկություն կամ ցանկություն են ավելի կատարյալ տեսնել քննարկվող աշխատանքի բովանդակությունը և բոլորովին չեն կարող ազդել աշխատանքի դրական արժանիքների վրա:

Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ ԲՈՀ-ի կողմից հրատարակված գիտական հրատարակությունների համար ընդունելի տարբերակներում հեղինակի հրատարակած հոդվածները բավարար չափով արտացոլում են աշխատանքի հիմնական դրույթները:

Սեղմագիրը և ատենախոսությունը համապատասխանում են ՀՀ կառավարության 1997թ. օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ (հետագա փոփոխություններով) հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին:

Ելնելով որոշարադրյալից, գտնում ենք, որ Աննա Հակոբյանի «Դատական նախադեպը նորմատիվ կարգավորիչների համակարգում պատմատեսական և իրավահամեմատական հետազոտություն» թեմայով թեկնածուական ատենախոսությունը գիտական նորույթ պարունակող, ամբողջական ու ավարտուն հետազոտություն է, իսկ նրա հեղինակն արժանի է իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
«Հայբուսակ» համալսարանի
«Իրավագիտության և միջազգային
հարաբերությունների ինստիտուտի» տնօրեն
իրավաբանական գիտությունների թեկնածու **Լ.Մ.Մալխասյան**

Լ.Մ. Մալխասյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի «Հայբուսակ» համալսարանի գիտքարտուղար՝ Տ.Պետրոսյան